

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

համարելով, որ մաքսային օրենսդրությանը հակասող իրավախախտումները վնասում են իրենց համապատասխան երկրների տնտեսական, ֆինանսական և առևտրային շահերին,

նկատի ունենալով մաքսատուրքերի և այլ հարկերի ճշգրիտ գնահատումն ապահովելու կարևորությունը,

գիտակցելով վարչարարության և իրենց համապատասխան երկրների մաքսային օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի շուրջ միջազգային համագործակցության անհրաժեշտությունը,

հաշվի առնելով այն միջազգային կոնվենցիաները, որոնք պարունակում են որոշակի ապրանքների նկատմամբ արգելքներ, սահմանափակումներ և հսկողության հատուկ միջոցներ,

համոզված լինելով, որ մաքսային իրավախախտումների նկատմամբ գործողությունները կարող են ավելի արդյունավետ դառնալ իրենց մաքսային մարմինների միջև համագործակցության միջոցով, և

վկայակոչելով Մաքսային համագործակցության խորհրդի «Փոխադարձ վարչական աջակցության մասին» 1953 թվականի դեկտեմբերի 5-ի հանձնարարականը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

## ՀՈԴՎԱԾ 1

### ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն համաձայնագրի նպատակներով՝

1. «Մաքսային մարմին» եզրույթը Հայաստանի Հանրապետությունում նշանակում է Պետական եկամուտների կոմիտե, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Միացյալ Նահանգների մաքսային սահմանային պաշտպանության ծառայություն, և Միացյալ Նահանգների ներգաղթի և մաքսային հսկողության ծառայություն, որոնք երկուսն էլ ԱՄՆ ազգային անվտանգության դեպարտամենտի բաղադրիչներն են,
2. «Մաքսային օրենսդրություն» եզրույթը նշանակում է Մաքսային մարմինների կողմից կիրառվող օրենքներն և կարգավորումներն, որոնք վերաբերում են ապրանքների ներմուծմանը, արտահանմանը, տարանցիկ փոխադրմանը կամ շրջանառությանը, քանի որ դրանք առնչություն ունեն մաքսատուրքերին, գանձումներին և այլ հարկերին կամ արգելքներին, սահմանափակումներին կամ այլ համանման հսկողություններին, որոնք վերաբերում են վերահսկվող ապրանքների տեղաշարժին՝ ազգային սահմաններով,
3. «տեղեկություններ» եզրույթը նշանակում է տվյալներ ցանկացած ձևով՝ մշակված, չմշակված կամ վերլուծության ենթարկված, ինչպես նաև փաստաթղթեր, հաշվետվություններ և ցանկացած այլ ձևաչափի հաղորդակցություններ, այդ թվում՝ էլեկտրոնային, կամ դրանց հաստատված կամ վավերացված պատճենները,
4. «մաքսային իրավախախտում» եզրույթը նշանակում է մաքսային օրենսդրության ցանկացած խախտում կամ խախտման փորձ,
5. «անձ» եզրույթը նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,
6. «գույք» եզրույթը նշանակում է ցանկացած տեսակի ակտիվներ՝ ֆիզիկական կամ ոչ ֆիզիկական, շարժական կամ անշարժ, նյութական կամ ոչ նյութական, ինչպես նաև իրավաբանական փաստաթղթեր կամ ակտեր, որոնք հավաստում են այդ ակտիվների նկատմամբ սեփականության իրավունք կամ դրանցում շահ ունենալը,
7. «ժամանակավոր միջոցներ» եզրույթը ներառում է «սառեցում» կամ «առգրավում», որը նշանակում է՝

ա. ժամանակավորապես արգելել գույքի, փոխակերպումը, տնօրինումը,

տեղաշարժը կամ փոխանցումը, կամ

բ. ժամանակավորապես ստանձնել գույքի տիրապետումը կամ վերահսկողությունը՝ դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից կայացված որոշման կամ այլ միջոցների հիման վրա,

8. «բռնագրավում» եզրույթը նշանակում է գրկել գույքից դատարանի կամ իրավասու մարմնի որոշմամբ, և կիրառելիության դեպքում ներառում է «բռնագանձում»,

9. «Հարցում ներկայացնող մարմին» կամ «Հարցում ներկայացնող կողմ» եզրույթը նշանակում է օգնություն խնդրող Մաքսային մարմին կամ Կողմ, և

10. «Հարցում ստացող մարմին» կամ «Հարցում ստացող կողմ» եզրույթը նշանակում է Մաքսային մարմին կամ Կողմ, որից օգնություն է հայցվում:

## ՀՈԴՎԱԾ 2

### ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Կողմերն իրենց Մաքսային մարմինների միջոցով պետք է միմյանց աջակցություն ցուցաբերեն ցանկացած մաքսային իրավախախտում կանխելու, բացահայտելու և քննելու հարցում՝ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան:
2. Յուրաքանչյուր Մաքսային մարմին պետք է կատարի սույն համաձայնագրի համաձայն ներկայացված աջակցության վերաբերյալ հարցումներն՝ իր ներպետական օրենսդրության և կարգավորումներին համապատասխան, և դրանց սահմանափակումների պահպանմամբ, ինչպես նաև իրենց իրավասության ու առկա ռեսուրսների սահմաններում:
3. Սույն համաձայնագիրը նախատեսված է բացառապես Կողմերի միջև փոխադարձ աջակցության համար: Սույն համաձայնագրի դրույթները ցանկացած մասնավոր անձի համար չեն առաջացնում իրավունք՝ ստանալու, թաքցնելու կամ բացառելու որևէ ապացույց, կամ խոչընդոտելու հարցման կատարումը:
4. Սույն համաձայնագիրը նախատեսված է Կողմերի միջև առկա փոխադարձ մաքսային աջակցությունն ընդլայնելու և լրացնելու համար: Սույն համաձայնագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ սահմանափակվեն Կողմերի միջև փոխադարձ աջակցության և առկա

համագործակցության վերաբերյալ  
պայմանավորվածություններն ու գործելակերպերը:

համաձայնագրերը,

### ՀՈԴՎԱԾ 3

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Հարցման հիման վրա Մաքսային մարմինը պետք է տրամադրի աջակցություն տեղեկատվության ձևով՝ մաքսային օրենսդրության կատարումն ապահովելու և Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքերն ու մյուս հարկերը պատշաճ ձևով գնահատելու համար:

2. Հարցման հիման վրա կամ իր նախաձեռնությամբ Մաքսային մարմինը կարող է տրամադրել աջակցություն տեղեկատվության ձևով՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով այն տեղեկություններով, որոնք վերաբերում են հետևյալին.

ա. ուղևորների և բեռների սպասարկման մեթոդներ և տեխնիկա,

բ. հարկադիր կատարման օժանդակ միջոցների և տեխնիկայի հաջող կիրառում,

գ. հարկադիր գործողություններ, որոնք կարող են օգտակար լինել մաքսային իրավախախտումներն արգելելու, և մասնավորապես մաքսային իրավախախտումների դեմ պայքարի հատուկ միջոցներ, և

դ. մաքսային իրավախախտումներ կատարելու ժամանակ օգտագործվող նոր մեթոդներ:

3. Մաքսային մարմինները պետք է համագործակցեն հետևյալի շուրջ.

ա. հաղորդակցման ուղիների ստեղծում և պահպանում՝ տեղեկությունների անվտանգ և արագ փոխանակումը դյուրացնելու նպատակով,

բ. արդյունավետ համակարգման նպաստում,

գ. նոր սարքավորումների կամ ընթացակարգերի դիտարկում և փորձարկում, և

դ. ցանկացած այլ ընդհանուր վարչական հարցեր, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ պահանջել նրանց կողմից համատեղ ձեռնարկվող գործողություններ:

## ՀՈԴՎԱԾ 4

### ՀԱՏՈՒԿ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Հարցման հիման վրա Մաքսային մարմինները միմյանց տեղեկացնում են այն մասին, թե արդյոք Կողմերից մեկի տարածքից արտահանված ապրանքները օրինական ձևով ներմուծվել են մյուս Կողմի տարածք: Պահանջի դեպքում տեղեկությունները պետք է պարունակեն ապրանքների մաքսագերծման համար օգտագործվող մաքսային ընթացակարգը:
2. Հարցման հիման վրա և ներպետական օրենսդրությանը համապատասխան, Մաքսային մարմինը հսկողություն է իրականացնում
  - ա. այն անձանց նկատմամբ, որոնք հայտնի է, որ կատարել են կամ կասկածվում են, որ պատրաստվում են կատարել մաքսային իրավախախտում՝ Հարցում ներկայացնող կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին,
  - բ. փոխադրվող կամ պահեստավորված ապրանքներ, որոնք ճանաչվել են որպես կասկածելի ապօրինի շրջանառության առարկա՝ Հարցում ներկայացնող կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին,
  - գ. տրանսպորտային միջոցներ, որոնք, հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում են, որ օգտագործվել են մաքսային իրավախախտումներ կատարելու մեջ՝ Հարցում ներկայացնող կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին, և
  - դ. Հարցում ստացող կողմի տարածքում գտնվող շինություններ, որոնք հայտնի է, որ օգտագործվել են կամ կասկածվում են, որ օգտագործվել են իրավախախտումներ կատարելու առնչությամբ՝ Հարցում ներկայացնող կողմի տարածքում, դեպի այդ տարածքն ընկած կամ այդ տարածքով անցնող ճանապարհին:
3. Հարցման հիման վրա Մաքսային մարմինները միմյանց տեղեկություններ են տրամադրում այն գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել մյուս Կողմի տարածքում մաքսային իրավախախտումների, այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են էական վնաս հասցնել մյուս Կողմի տնտեսությանը, հանրային առողջությանը, հանրային անվտանգությանը կամ նմանատիպ այլ կենսական շահերին: Մաքսային մարմինները հնարավորության դեպքում պետք է տրամադրեն այդպիսի տեղեկություններ՝ առանց այդ մասին հարցում ստանալու: Սույն համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Մաքսային մարմիններին ինքնուրույն կերպով տեղեկություններ տրամադրել այն

գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել մյուս Կողմի տարածքում մաքսային իրավախախտումների:

4. Կողմերը կարող են աջակցություն տրամադրել ժամանակավոր միջոցների կիրառմանն ու բռնագրավմանն, ինչպես նաև ժամանակավոր միջոցների կամ բռնագրավման ենթակա գույքի հետ կապված վարույթներում:
5. Կողմերը, սույն համաձայնագրի և բռնագրավված ակտիվների բաշխման և տնօրինման վերաբերյալ իրենց միջև կնքված այլ համաձայնագրերին համապատասխան, կարող են՝
  - ա. տնօրինել սույն համաձայնագրի համաձայն տրամադրված աջակցության արդյունքում բռնագրավված գույքը, եկամուտները և փաստաթղթերը՝ գույքի, եկամուտների և փաստաթղթերի նկատմամբ վերահսկողություն ունեցող Կողմի ներպետական օրենսդրությանը համապատասխան, և
  - բ. այնքանով, որքանով թույլատրվում է իրենց համապատասխան ներպետական օրենսդրությամբ, և առանց հաշվի առնելու փոխադարձության պահանջը՝ փոխանցել բռնագրավված գույքը, եկամուտները կամ փաստաթղթերը կամ դրանց վաճառքից ստացված հասույթը մյուս Կողմին այնպիսի պայմաններով, որոնք կարող են համաձայնեցվել:
6. Մաքսային մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ իրենց վերահսկողության ներքո թույլատրել ապօրինի կամ կասկածելի ապրանքների տեղափոխումը իրենց համապատասխան տարածքներից, տարածքներով կամ դեպի այդ տարածքներ՝ մաքսային իրավախախտումների քննության և դրանց դեմ պայքարի նպատակով: Եթե նման թույլտվության տրամադրումը Մաքսային մարմնի իրավասության սահմաններում չէ, ապա այդ Մաքսային մարմինը պետք է ձգտի նախաձեռնել համագործակցություն այդպիսի իրավասություն ունեցող ազգային մարմինների հետ, կամ պետք է գործը փոխանցի այդ մարմիններին:

#### ՀՈԴՎԱԾ 5

#### ԳՈՐԾԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Հարցման հիման վրա Մաքսային մարմինները տրամադրում են ապրանքների փոխադրման և առաքման վերաբերյալ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս այդ ապրանքների արժեքը, նպատակակետն և տնօրինումը:
2. Հարցում ներկայացնող մարմինը կարող է պահանջել գործի նյութերի, փաստաթղթերի և այլ փաստաթղթերի բնօրինակները միայն այն դեպքում, երբ պատճենները բավարար չեն: Հարցման հիման վրա Հարցում ստացող կողմը պետք է տրամադրի նման նյութերի, փաստաթղթերի և այլ նյութերի պատշաճ ձևով վավերացված պատճենները:

3. Եթե Հարցում ներկայացնող մարմինը հատուկ չի պահանջում բնօրինակներ կամ պատճեններ, ապա Հարցում ստացող մարմինը միաժամանակ պետք է տրամադրի բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են համակարգչային տեղեկատվության մեկնաբանման կամ օգտագործման համար:
4. Եթե Հարցում ստացող մարմինը համաձայնում է, ապա Հարցում ներկայացնող մարմնի կողմից նշանակված պաշտոնատար անձինք կարող են Հարցում ստացող մարմնի գրասենյակներում ուսումնասիրել մաքսային իրավախախտման հետ կապված տեղեկություններն և պատճենել դրանք կամ տեղեկություններ հանել դրանցից:
5. Փոխանցված գործերի, փաստաթղթերի և այլ նյութերի բնօրինակները պետք է վերադարձվեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Հարցում ստացող մարմնի կամ Հարցում ստացող մարմնից դուրս որևէ անձի կամ անհատի՝ դրանց վերաբերող ցանկացած իրավունք մնում է անփոփոխ:

#### ՀՈԴՎԱԾ 6

##### ՎԿԱՆԵՐԸ

1. Հարցում ստացող մարմինը կարող է լիազորել իր աշխատակիցներին՝ որպես վկաներ ներկայանալու մյուս Կողմի տարածքում դատական կամ վարչական վարույթում, և ներկայացնել գործի նյութերը, փաստաթղթերը կամ այլ նյութեր կամ դրանց վավերացված պատճենները:
2. Եթե որպես վկա ներկայանալու հարցում ստացած մաքսային հարցերով պաշտոնատար անձը դիվանագիտական կամ հյուպատոսական անձեռնմխելիության իրավունք ունի, ապա Հարցում ստացող կողմը կարող է համաձայնվել անձեռնմխելիությունից հրաժարվելուն այնպիսի պայմաններով, որոնք նա կհամարի համապատասխան:

#### ՀՈԴՎԱԾ 7

##### ՀԱՐՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱՅՈՒՄԸ

1. Սույն համաձայնագրի համաձայն հարցումները պետք է ներկայացվեն ուղղակիորեն գրավոր՝ համապատասխան Մաքսային մարմինների ղեկավարների կողմից նշանակված պաշտոնատար անձանց միջև: Հարցմանը կցվում են այնպիսի տեղեկություններ, որոնք օգտակար են համարվում հարցումների կատարման համար: Անհետաձգելի իրավիճակներում կարող են ներկայացվել և ընդունվել

բանավոր հարցումներ, սակայն դրանք պետք է անհապաղ հաստատվեն գրավոր ձևով, որքան հնարավոր է արագ, և ոչ ուշ, քան բանավոր հարցում ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հարցում ներկայացնող մարմնի օրացույցի հիման վրա:

2. Հարցումները պետք է ներառեն որքան հնարավոր է շատ տեղեկություններ, Հարցում ստացող մարմնին արձագանքելու հարցում աջակցելու համար՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով հետևյալով.

ա. հարցում ներկայացնող մարմնի անվանումը,

բ. հարցի կամ վարույթի բնույթը,

գ. վերաբերելի փաստերի և մաքսային իրավախախտումների համառոտ շարադրանքը,

դ. հարցման պատճառը,

ե. հայցվող աջակցության նկարագրությունը, և

զ. տվյալ հարցում շահագրգիռ կամ վարույթում գտնվող անձանց անուններն ու հասցեները, կամ նրանց վերաբերյալ այլ համապատասխան և մատչելի տեղեկություն, եթե դրանք հայտնի են:

## ՀՈԴՎԱԾ 8

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Հարցում ստացող մարմինը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ հարցումը կատարելու համար, և պետք է ձգտի ապահովել այդ նպատակի համար անհրաժեշտ ցանկացած պաշտոնական միջոց:
2. Եթե Հարցում ստացող մարմինը համապատասխան մարմին չէ հարցումը կատարելու համար, ապա նա կարող է, բացի համապատասխան մարմնի կամ կիրառելի համաձայնագրի վերաբերյալ Հարցում ներկայացնող մարմնին խորհրդատվություն տալուց, հայտնի լինելու դեպքում այն փոխանցել համապատասխան մարմնին:
3. Հարցում ստացող մարմինը հնարավորինս լիարժեք պետք է իրականացնի կամ թույլատրի Հարցում ներկայացնող մարմնին անցկացնել նման տեսչական ստուգումներ, վավերացումներ, փաստահավաք հետաքննություններ, կամ քննչական այլ միջոցառումներ, ներառյալ՝ փորձագետների, վկաների ու մաքսային



իրավախախտումների կատարման մեջ կասկածվող անձանց հարցաքննությունը քանի որ դա անիրաժեշտ է հարցումը կատարելու համար:

4. Հարցման հիման վրա Հարցում ներկայացնող մարմինը պետք է տեղեկացվի այն գործողությունների ժամանակի և վայրի մասին, որոնք պետք է ձեռնարկվեն հարցումը կատարելու համար:
5. Հարցման հիման վրա Հարցում ստացող կողմը կարող է առավելագույն հնարավոր ձևով լիազորել Հարցում ներկայացնող մարմնի պաշտոնատար անձանց ներկա գտնվել Հարցում ստացող կողմի տարածքում՝ հարցումը կատարելու համար աջակցելու նպատակով:
6. Հարցում ստացող մարմինը պետք է բավարարի հարցումը, որով պետք է պահպանվի որոշակի ընթացակարգ այնքանով, որքանով այդ ընթացակարգն արգելված չէ Հարցում ստացող կողմի ներպետական օրենսդրությամբ:

#### ՀՈԴՎԱԾ 9

##### ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սույն համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկությունների համար ստացող Կողմը պետք է ապահովի նույն աստիճանի գաղտնիությունը, որը նա կիրառում է իր մոտ գտնվող նմանատիպ տեղեկությունների նկատմամբ:
2. Սույն համաձայնագրի համաձայն ձեռք բերված տեղեկությունները կարող են օգտագործվել կամ բացահայտվել միայն սույն համաձայնագրում նշված նպատակների համար՝ ներառելով ստացող Կողմի կողմից դրանց օգտագործումը ցանկացած վարույթում: Այդ տեղեկությունները կարող են օգտագործվել կամ բացահայտվել այլ նպատակներով կամ ստացող Կողմի այլ մարմինների կողմից, եթե դրանք տրամադրող Մաքսային մարմինը հստակորեն գրավոր հավանություն է տվել այդ օգտագործմանը կամ բացահայտմանը:
3. Կողմերից որևէ մեկի կողմից ստացված տեղեկությունները տրամադրող Կողմի հայցմամբ համարվում են գաղտնի: Նշվում են նման հայցման պատճառները:
4. Սույն հոդվածը չի խոչընդոտում սույն համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումն այնքանով, որքանով առկա է այդպես վարվելու պարտավորություն ստացող Կողմի Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ՝ կապված որևէ քրեական վարույթի հետ: Ստացող Կողմը ցանկացած նման առաջարկվող բացահայտման մասին նախապես ծանուցում է տեղեկությունները տրամադրող Կողմին:

5. Սույն հոդվածը չի խոչընդոտում սույն համաձայնագրի համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը կամ բացահայտումը՝ կապված ահաբեկչության կամ ազգային անվտանգության այլ հարցերի հետ, եթե ստացող Կողմի գործող օրենսդրության համաձայն առկա է այդպիսի տեղեկությունները օգտագործելու կամ բացահայտելու պարտավորություն:
6. Եթե պարզվի, որ տրամադրված տվյալները սխալ են կամ չպետք է փոխանակվեին, ապա պետք է այդ մասին անմիջապես ծանուցվի: Այդպիսի տվյալներ ստացած Մաքսային մարմինը պետք է փոփոխի կամ վերացնի դրանք:
7. Սույն հոդվածի համաձայն հրապարակված տեղեկությունները կարող են օգտագործվել ցանկացած նպատակով:
8. Յուրաքանչյուր համապատասխան Մաքսային մարմին ձեռք է բերում կամ պահպանում տեղական պայմանավորվածություններ՝ ապահովելու գաղտնի տվյալների, գործի նյութերի և փաստաթղթերի համապատասխան փոխանցումը, անվտանգ պահպանությունը, պահեստավորումը, մշակումը և ներքին տարածումը:

#### ՀՈԴՎԱԾ 10

#### ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Եթե Հարցում ստացող կողմը որոշում է, որ աջակցություն տրամադրելով կխախտվի իր ինքնիշխանությունը, անվտանգությունը, հանրային քաղաքականությունը կամ այլ էական ազգային շահեր, կամ այն կհակասի իր ներպետական օրենսդրությանը և կանոնակարգերին, ներառյալ՝ օգտագործման և գաղտնիության սահմանափակումների երաշխիքների անհապատասխանության ցանկացած իրավական պահանջ, ապա այն կարող է հրաժարվել կամ դադարեցնել աջակցությունը կամ կարող է տրամադրել այն՝ որոշակի պայմանների կամ պահանջների բավարարման դեպքում:
2. Եթե Հարցում ներկայացնող մարմինը չկարողանա բավարարել այդ հարցումն, երբ Հարցում ստացող մարմնի կողմից ներկայացվել է նմանատիպ հարցում, ապա այն պետք է իր հարցման մեջ ուշադրություն հրավիրի այդ փաստի վրա: Այդ հարցումը բավարարելը պետք է լինի Հարցում ստացող մարմնի հայեցողությամբ:
3. Հարցում ստացող մարմինը կարող է հետաձգել աջակցությունը այն հիմքով, որ այն կխոչընդոտի ընթացող հետաքննությանը, քրեական հետապնդմանը կամ վարույթին: Նման դեպքում Հարցում ստացող մարմինը պետք է խորհրդակցի Հարցում ներկայացնող մարմնի հետ՝ որոշելու, թե արդյոք աջակցությունը

կարող է տրամադրվել Հարցում ստացող մարմնի կողմից պահանջվող ժամկետների ու պայմաններին համապատասխան:

4. Այն դեպքում, երբ հարցումը չի կարող բավարարվել, ապա այդ մասին պետք է անհապաղ տեղեկացվի Հարցում ներկայացնող մարմնին, և տրամադրվի հարցումը հետաձգելու կամ մերժելու պատճառների մասին հայտարարություն: Այն հանգամանքները, որոնք կարող են կարևոր լինել գործի հետագա հետապնդման համար, պետք է տրամադրվեն նաև Հարցում ներկայացնող մարմնին:

#### ՀՈԴՎԱԾ 11

##### ԾԱԽՍԵՐԸ

1. Հարցում ստացող Կողմը սովորաբար վճարում է հարցման կատարման հետ կապված բոլոր ծախսերը՝ բացառությամբ փորձագետների և վկաների, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանության ու սղագրության հետ կապված ծախսերը, որոնք պետք է վճարի Հարցում ներկայացնող կողմը:
2. Եթե հարցումը կատարելու ընթացքում ակնհայտ է դառնում, որ հարցման կատարումն ավարտելու համար պահանջվում են չնախատեսված ծախսեր, ապա Մաքսային մարմինները խորհրդակցում են՝ որոշելու այն ժամկետներն ու պայմանները, որոնց համաձայն կարող է շարունակվել հարցման կատարումը:

#### ՀՈԴՎԱԾ 12

##### ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ

1. Մաքսային մարմինները պետք է՝

ա. հաղորդակցվեն ուղղակիորեն՝ սույն համաձայնագրից բխող հարցերը կարգավորելու նպատակով,

բ. խորհրդակցությունից հետո արձակեն սույն համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ ցանկացած վարչական հրահանգ,

գ. ձգտեն փոխադարձ համաձայնությամբ լուծել սույն համաձայնագրի մեկնաբանությունից կամ կիրառությունից բխող ցանկացած հարց կամ վեճ:

2. Մաքսային մարմինների կողմից չլուծվող ցանկացած վեճ կարգավորվում է դիվանագիտական միջոցներով:

3. Մաքսային մարմինները համաձայնում են ըստ անհրաժեշտության պարբերաբար հանդիպել, Կողմերից որևէ մեկի խնդրանքով՝ սույն համաձայնագրի կիրառումը վերանայելու համար:

### ՀՈԴՎԱԾ 13

#### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սույն համաձայնագիրը կիրառելի է երկու Կողմերի տարածքներում, ինչպես սահմանված է նրանց ներպետական իրավական և վարչական դրույթներով:

### ՀՈԴՎԱԾ 14


#### ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի միջև դիվանագիտական գրությունների փոխանակման գործընթացում՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերն ավարտելու վերաբերյալ նշումով՝ վերջին գրությունն ուղարկելու օրվանից:
2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ, դիվանագիտական ուղիներով ծանուցման միջոցով դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը: Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Կողմին դադարեցնելու մասին ծանուցելու օրվանից երեք ամիս հետո: Դադարեցումն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ աջակցության վերաբերյալ ընթացիկ հարցումներն, այնուամենայնիվ, պետք է ավարտին հասցվեն սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան:
3. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել ցանկացած ժամանակ՝ փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ է Երևանում, 2024 թվականի հունիսի 11 -ին, երկու օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ  
ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ



**AGREEMENT**  
**BETWEEN**  
**THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**AND**  
**THE GOVERNMENT OF THE UNITED STATES OF AMERICA**  
**REGARDING MUTUAL ASSISTANCE**  
**BETWEEN THEIR CUSTOMS ADMINISTRATIONS**

The Government of the Republic of Armenia and the Government of the United States of America, hereinafter referred to as the "Parties";

Considering that offenses against customs laws are prejudicial to the economic, fiscal and commercial interests of their respective countries;

Considering the importance of ensuring the accurate assessment of customs duties and other taxes;

Recognizing the need for international cooperation in matters related to the administration and enforcement of the customs laws of their respective countries;

Having regard for the international conventions containing prohibitions, restrictions and special measures of control in respect of specific goods;

Convinced that action against customs offenses can be made more effective by cooperation between their Customs Administrations; and

Referencing the Recommendation of the Customs Cooperation Council regarding Mutual Administrative Assistance of December 5, 1953;

Have agreed as follows:

## ARTICLE 1

### DEFINITIONS

For the purposes of the present Agreement:

1. the term “Customs Administration” means, in the Republic of Armenia, State Revenue Committee and in the United States of America, United States Customs and Border Protection and United States Immigration and Customs Enforcement, which are both components of the U.S. Department of Homeland Security;
2. the term “customs laws” means the laws and regulations enforced by the Customs Administrations concerning the importation, exportation, and transit or circulation of goods as they relate to customs duties, charges, and other taxes or to prohibitions, restrictions, and other similar controls respecting the movement of controlled items across national boundaries;
3. the term “information” means data in any form, whether or not processed or analyzed; and documents, reports and other communications in any format, including electronic, certified, or authenticated copies thereof;
4. the term “customs offense” means any violation or attempted violation of the customs laws;
5. the term “person” means any natural or legal person;
6. the term “property” means assets of every kind, whether corporeal or incorporeal, movable or immovable, tangible or intangible, and legal documents or instruments evidencing title to or an interest in such assets;
7. the term “provisional measures” includes “seizure” or “freezing,” which means:
  - a. temporarily prohibiting the conversion, disposition, movement, or transfer of property, or
  - b. temporarily assuming custody or control of property on the basis of an order issued by a court or competent authority, or other means;
8. the term “forfeiture” means the deprivation of property by order of a court or competent authority and includes confiscation where applicable;
9. the term “requesting Administration” or “requesting Party” means the Customs Administration or Party that requests assistance; and
10. the term “requested Administration” or “requested Party” means the Customs Administration or Party from which assistance is requested.

## ARTICLE 2

### SCOPE OF AGREEMENT

1. The Parties, through their Customs Administrations, shall assist each other, in accordance with the provisions of this Agreement, in preventing, detecting, and investigating any customs offense.
2. Each Customs Administration shall execute requests for assistance made pursuant to this Agreement in accordance with and subject to the limitations of its domestic law and regulations, and within the limits of its competence and available resources.
3. This Agreement is intended solely for mutual assistance between the Parties; the provisions of this Agreement shall not give rise to a right on the part of any private person to obtain, suppress, or exclude any evidence, or to impede the execution of a request.
4. This Agreement is intended to enhance and supplement mutual customs assistance in effect between the Parties. No provision in this Agreement may be interpreted in a manner that would restrict agreements, arrangements and practices relating to mutual assistance and cooperation in effect between the Parties.

## ARTICLE 3

### SCOPE OF GENERAL ASSISTANCE

1. Upon request, a Customs Administration shall provide assistance in the form of information in order to ensure the enforcement of the customs laws and the accurate assessment of customs duties and other taxes by the Customs Administrations.
2. Upon request or upon its own initiative, a Customs Administration may provide assistance in the form of information, including but not limited to information concerning:
  - a. methods and techniques for processing passengers and cargo;
  - b. the successful application of enforcement aids and techniques;
  - c. enforcement actions that might be useful to suppress customs offenses and, in particular, special means of combating customs offenses; and
  - d. new methods used in committing customs offenses.
3. The Customs Administrations shall cooperate in:



- a. establishing and maintaining channels of communication to facilitate the secure and rapid exchange of information;
- b. facilitating effective coordination;
- c. the consideration and testing of new equipment or procedures; and
- d. any other general administrative matters that may from time to time require their joint action.

#### ARTICLE 4

##### SCOPE OF SPECIFIC ASSISTANCE

1. Upon request, the Customs Administrations shall inform each other whether goods exported from the territory of one Party have been lawfully imported into the territory of the other Party. If requested, the information shall contain the customs procedure used for clearing the goods.
2. Upon request, and consistent with domestic laws, a Customs Administration shall exercise surveillance of:
  - a. persons known to have committed or suspected of being about to commit a customs offense within, toward, or through the territory of the requesting Party;
  - b. goods either in transport or in storage identified as giving rise to suspected illicit traffic within, toward, or through the territory of the requesting Party;
  - c. means of transport known to have been used or suspected of being used to commit a customs offense within, toward, or through the territory of the requesting Party; and
  - d. premises in the territory of the requested Party known to have been used or suspected of being used in connection with the commission of a customs offense within, toward, or through the territory of the requesting Party.
3. Upon request, the Customs Administrations shall furnish to each other information regarding activities that may result in customs offenses within the territory of the other Party. In situations that could involve substantial damage to the economy, public health, public security, or similar vital interest of the other Party, the Customs Administrations, wherever possible, shall supply such information without being requested to do so. Nothing in this Agreement otherwise precludes the Customs

Administrations from providing on their own initiative information regarding activities that may result in customs offenses within the territory of the other Party.

4. The Parties may provide assistance through the use of provisional measures and forfeiture, and in proceedings involving property subject to provisional measures or forfeiture.
5. The Parties may, consistent with this Agreement and with other agreements between them pertaining to the sharing and disposition of forfeited assets:
  - a. dispose of property, proceeds, and instrumentalities forfeited as a result of assistance provided under this Agreement in accordance with the domestic law of the Party in control of the property, proceeds, and instrumentalities; and
  - b. to the extent permitted by their respective domestic laws, and without regard to the requirement of reciprocity, transfer forfeited property, proceeds, or instrumentalities, or the proceeds of their sale, to the other Party upon such terms as may be agreed.
6. The Customs Administrations may, by mutual arrangement, permit under their control, the movement of unlawful or suspect goods out of, through, or into their respective territory, with a view to investigating and combating customs offenses. If granting such permission is not within the competence of the Customs Administration, that Customs Administration shall endeavor to initiate co-operation with the national authorities that have such competence, or it shall transfer the case to those authorities.

## ARTICLE 5

### FILES AND DOCUMENTS

1. Upon request, the Customs Administrations shall provide information relating to transportation and shipment of goods showing value, destination, and disposition of those goods.
2. A requesting Administration may request originals of files, documents, and other materials only where copies would be insufficient. Upon request, the requested Administration shall provide properly certified copies of such files, documents, and other materials.
3. Unless the requesting Administration specifically requests originals or copies, the requested Administration may transmit computer-based information in any form. The requested Administration shall supply all information relevant for interpreting or utilizing computer-based information at the same time.

4. If the requested Administration agrees, officials designated by the requesting Administration may examine, in the offices of the requested Administration, information relevant to a customs offense and make copies thereof or extract information therefrom.
5. Originals of files, documents, and other materials that have been transmitted shall be returned at the earliest opportunity; any rights of the requested Administration or of any entity or individual outside of the requested Administration relating thereto shall remain unaffected.

#### ARTICLE 6

##### WITNESSES

1. The requested Administration may authorize its employees to appear as witnesses in judicial or administrative proceedings in the territory of the other Party and to produce files, documents, or other materials or certified copies thereof.
2. Where a customs official requested to appear as a witness is entitled to diplomatic or consular immunity, the requested Party may agree to a waiver of immunity under such conditions as it determines to be appropriate.

#### ARTICLE 7

##### COMMUNICATION OF REQUESTS

1. Requests pursuant to this Agreement shall be made in writing directly between officials designated by the Heads of the respective Customs Administrations. Information deemed useful for the execution of requests shall accompany the request. In urgent situations, oral requests may be made and accepted, but shall be promptly confirmed in writing as expeditiously as possible, and no later than 10 business days, based upon the requesting Administration's calendar, from the date of the oral request.
2. Requests shall include as much information as possible to assist the requested Administration in responding, including, but not limited to:
  - a. the name of the requesting Administration;
  - b. the nature of the matter or proceedings;
  - c. a brief statement of the facts and customs offenses involved;

- d. the reason for the request;
- e. a description of the assistance requested; and
- f. the names and addresses or other appropriate and available information regarding the persons concerned in the matter, or proceeding, if known.

## ARTICLE 8

### EXECUTION OF REQUESTS

1. The requested Administration shall take all reasonable measures to execute a request and shall endeavor to secure any official measure necessary for that purpose.
2. If the requested Administration is not the appropriate agency to execute a request, it may, in addition to advising the requesting Administration of the appropriate authority or applicable agreement, if known, transmit it to the appropriate authority.
3. The requested Administration shall conduct to the fullest extent possible, or permit the requesting Administration to conduct, such inspections, verifications, fact-finding inquiries, or other investigative steps, including the questioning of experts, witnesses, and persons suspected of having committed a customs offense, as are necessary to execute a request.
4. Upon request, the requesting Administration shall be advised of the time and place of action to be taken in executing a request.
5. Upon request, the requested Party may authorize, to the fullest extent possible, officials of the requesting Administration to be present in the territory of the requested Party to assist in execution of a request.
6. The requested Administration shall comply with a request that a certain procedure be followed to the extent that such procedure is not prohibited by the domestic law of the requested Party.

## ARTICLE 9

### LIMITATIONS ON USE

1. Information obtained under this Agreement shall be afforded the same degree of confidentiality by the receiving Party that it applies to similar information in its custody.

2. Information obtained under this Agreement may only be used or disclosed for the purposes specified in this Agreement, including use by the receiving Party in any proceedings. Such information may be used or disclosed for other purposes or by other authorities of the receiving Party if the supplying Customs Administration has expressly approved such use or disclosure in writing.
3. Information received by either Party shall, upon request of the supplying Party, be treated as confidential. The reasons for such a request shall be stated.
4. This Article shall not preclude the use or disclosure of information exchanged pursuant to this Agreement to the extent that there is an obligation to do so under the Constitution or domestic laws of the receiving Party in connection with any criminal proceeding. The receiving Party shall give advance notice of any such proposed disclosure to the supplying Party.
5. This Article shall not preclude the use or disclosure of information exchanged pursuant to this Agreement in connection with terrorism or other national security matters where there is an obligation to use or disclose such information under the receiving Party's applicable laws.
6. If data supplied is found to be incorrect or should not have been exchanged, notification should be made immediately. The Customs Administration that has received such data shall amend or delete it.
7. Information made public under this Article may be used for any purpose.
8. Each respective Customs Administration shall establish or maintain local arrangements to ensure appropriate transmission, safekeeping, storage, handling and internal dissemination of confidential data, files and documents.

## ARTICLE 10

### EXEMPTIONS

1. Where a requested Party determines that granting assistance would infringe upon its sovereignty, security, public policy or other substantive national interest, or would be inconsistent with its domestic law and regulations, including any legal requirement relating to non-compliance with assurances regarding limitations on use or confidentiality, it may refuse or withhold assistance, or may grant it subject to the satisfaction of certain conditions or requirements.
2. If the requesting Administration would be unable to comply if a similar request were made by the requested Administration, it shall draw attention to that fact in its request. Compliance with such a request shall be at the discretion of the requested Administration.

3. The requested Administration may postpone assistance on the ground that it will interfere with an ongoing investigation, prosecution, or proceeding. In such instance, the requested Administration shall consult with the requesting Administration to determine if assistance can be given subject to such terms or conditions as the requested Administration may require.
4. In the event that a request cannot be complied with, the requesting Administration shall be promptly notified and provided with a statement of the reasons for postponement or denial of the request. Circumstances that might be of importance for the further pursuit of the matter shall also be provided to the requesting Administration.

## ARTICLE 11

### COSTS

1. The requested Party shall normally pay all costs relating to the execution of the request, with the exception of expenses for experts and witnesses and the costs of translation, interpretation and transcription, which shall be paid for by the requesting Party.
2. If during the execution of a request it becomes apparent that completion of the execution of the request will entail expenses of an extraordinary nature, the Customs Administrations shall consult to determine the terms and conditions under which execution may continue.

## ARTICLE 12

### IMPLEMENTATION OF THE AGREEMENT

1. The Customs Administrations shall:
  - a. communicate directly for the purpose of dealing with matters arising out of this Agreement;
  - b. after consultation, issue any administrative directives necessary for the implementation of this Agreement; and
  - c. endeavor by mutual accord to resolve any questions or disputes arising from the interpretation or application of this Agreement.
2. Disputes that are not resolved by the Customs Administrations shall be settled by diplomatic means.

3. The Customs Administrations agree to meet periodically as necessary at the request of either Party in order to review the implementation of this Agreement.

#### ARTICLE 13

##### TERRITORIAL APPLICATION

This Agreement shall be applicable in the territories of both Parties as defined in their domestic legal and administrative provisions.

#### ARTICLE 14


##### ENTRY INTO FORCE AND TERMINATION

1. This Agreement shall enter into force on the date of the last note in an exchange of diplomatic notes between the Parties indicating that they have completed the necessary internal procedures for entry into force.
2. Either Party may terminate this Agreement at any time by notification through diplomatic channels. The termination shall take effect three months from the date of notification of termination to the other Party. Ongoing requests for assistance made prior to the effective date of termination shall nonetheless be completed in accordance with the provisions of this Agreement.
3. This Agreement may be amended at any time by mutual written agreement.

IN WITNESS WHEREOF, the undersigned, being duly authorized by their respective Governments, have signed this Agreement.

DONE, in duplicate, at Yerevan, on June 11, 2024, in the Armenian and English languages, both texts being equally authentic.

**FOR THE GOVERNMENT OF  
THE REPUBLIC OF ARMENIA**




**FOR THE GOVERNMENT OF  
THE UNITED STATES OF AMERICA**



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի հունիսի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև իրենց մաքսային մարմինների փոխադարձ օգնության վերաբերյալ» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետ՝**



*S. Melikyan*  
**Նելլի Սարոյան**